«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • Fax: +374 10 564111 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1431

«07» 08 2019թ.

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան,

Ձեզ ենք ներկայացնում 01.08.2019թ. կայացված և 05.08.2019թ. հրապարակված թիվ «ԳԲՔԱ-ՆԳ-2019/47» որոշումից բխող իրականացված գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով թիվ «ԳԲՔԱ-ՆԳ-2019/47» որոշումը՝ 2019 թվականի օգոստոսի 6-ին հրավիրվել է «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստ: Կայացած նիստի ընթացքում հանձնաժողովը որոշեց դադարեցնել 24.06.2019թ. կայացած 5-րդ նիստի արձանագրությամբ «Մեդիտեք» ՍՊ ընկերությանը 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու որոշումը, մերժել «Մեդիտեք» ՍՊ ընկերության հայտը 1-ին չափաբաժնի մասով և որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությանը: Տեղեկացնենք նաև, որ գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ նիստի արձանագրությունը 2019 թվականի օգոստոսի 6-ին հրապարակվել է տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում, իսկ որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջը ուղարկվել է «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերության պաշտոնական էլեկտրոնային հասցեին:

0003444

Կից ներկայացնում ենք «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 06.08.2019թ. թիվ 8 նիստի արձանագրության և «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերության ծանուցման պատճենները:

Առդիր 2 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Կ.Ռ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

Կատարող՝ Տատյանա Միրզոյան
Հեռ:. 060 651 471

Արձանագրություն N 8

«ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» «օգոստոսի» 2019թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Նախագահող՝ Ա.Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Գրիգորյան, Է.Միրոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Միրզոյան
Բացակայում էին՝ Լ.Դանիելյան, Կ.Մկրտչյան

1. **«ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման կատարման մասին**

Ի կատարումն գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 01.08.2019թ. կայացված և 05.08.2019թ. տեղեկագրում հրապարակված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/47 որոշումը՝ հանձնաժողովը որոշեց դադարեցնել 24.06.2019թ. կայացած 5-րդ նիստի արձանագրությամբ «Մեդիտեք» ՍՊ ընկերությանը 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու որոշումը, մերժել «Մեդիտեք» ՍՊ ընկերության հայտը 1-ին չափաբաժնի մասով և որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահող՝ _____ Ա.Հակոբյան

Անդամներ՝ _____ Մ.Գրիգորյան

_____ Է.Միրոյան

Քարտուղար՝ _____ Տ.Միրզոյան

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերության տնօրեն՝ Վ.Թորոսյանին

Հարգելի մասնակից,

Հայտնում ենք, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 06.08.2019թ. թիվ 8 որոշմամբ N 1 /Հիվանդների կարդիոմոնիտորինգային համակարգ/ չափաբաժնի մասով Ձեր կազմակերպությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Առաջարկում ենք օրենքով սահմանված ժամկետներում ներկայացնել ընթացակարգի հրավերով պահանջվող Հավելված 6-ը և Հավելված 6.2-ը:

Սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Ձեր հայտը կմերժվի:

Հարգանքով՝

«ԳՀԱՊՁԲ-2019/16-20-ԵՊԲՀ» ընթացակարգի քարտուղար